



ՍԵՂԱ ՄԱՐԱԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ ՏՈՆԱԿԱՆՆԵՐԸ

Գրիգոր Սերենց Նյաթեցին (134) — 1425 թթ.) մեր անցյալի նշանավոր գործիչներից է, միջնադարյան հայ մշակույթի ակադեմիայի ներկայացուցիչներից մեկը: Իր գործունեությամբ ու գրական վաստակով նա մասնակցել է մեր ժողովրդի գոյատևման ու արավոր պայքարին: Իրար հաջորդող արշավանքները, նվաճողների ավերումներն ու կամայականությունները, բնաջնջման, կործանման, հավատափոխության նրանց քաղաքականությունը անվերջ ստիպել են հայ ժողովրդի արժանավոր անհատներին եղանակներ որոնել հայրենիքն ու ժողովուրդը կորստից փրկելու համար: Այս առումով հայ ժողովրդի կյանքում բացառություններ կազմող հարյուրամյակներ չկան, և նրա ճակատագրի մղտահոգությամբ ապրող անձանց թիվը երբեք չի պակասել: Այդպիսի անձնավորություն էր նաև Գրիգոր Նյաթեցի վարդապետը, Հովհաննես Ռրոտնեցու համալսարանի սանն ու Գրիգոր Տաթևացու դասընկերը:

Նյաթեցին ավելի քան կես դար գրել է ընդօրինակել, քարոզել, սովորեցրել և դրանով օգնել իր ժողովրդին՝ աննկուն պահելու իր ազգային ոգին ընդդեմ օտար տիրապետողների, ընդդեմ ձուլման ու հավատափոխության: Այդ պայքարում նրա վենքը հայոց գիրն էր, հայ դարավոր մշակույթի, ավանդույթի ու հավատի պաշտպանության ջատագովությունը, որ անում էր բանիվ և գործով, անձնվիրությամբ և անձնազոհությամբ:

Գրիգոր Նյաթեցին գնահատվել է դեռ կենդանության օրոք և առավել՝ մահից հետո: Նրա գործերն ընդօրինակող գրիչները մեծ

ակնածանքով են խոսում «երկրորդ վկայափրի», «տիեպերսույս վարդապետի», «մեծ թաբունապետի», «անհամեմատ քարտուղարի» մասին: Բունաստեղծ Առաքել Բաղիշեցին, որը երկար ժամանակ աշակերտել է Նյաթեցուն, նրան համեմատում է Մեսրոպ Մաշտոցի հետ («նրման մեծին այն Մեսրոբայ»), համարում «լուսաւորիչ հայոց», «թաբունապետ հայոց ազգի», «ախտեան հաւատոյ», իսկ Թովմա Մեծփեցի պատմիչը Նյաթեցուն իմաստությամբ առավել է տեսնում «քան ամենայն վարդապետք»:

Գրիգոր Նյաթեցին առաջին հերթին պատմիչ է: Նա գրել է Հայոց պատմություն, որը դժբախտաբար մեկ չի հասել: Շարադրել է իր ժամանակակիցների, ինչպես նաև պատմական անձնավորությունների վարքերն ու վկայաբանությունները՝ ելնելով հայրենիքին մատուցած նրանց ծառայություններից: Խնդրազրել է Հայսմավուրք և Գանձարան ժողովածուները, առաջինը հարստացնելով հայ կյանքից վերցրած բազմաթիվ վարք-վկայաբանություններով, երկրորդը՝ բազմաթիվ գանձերով, տաղերով, մեղեդիներով և հորհորակներով: Սրանց մի մասի, ինչպես նաև եղանակի հորինողն ինքն է: Տոնականներում մուծել է հայ պատմիչների երկերից քաղված հայրենասիրական հատվածներ, հերոսական դրվագներ: Գրել է ավանդական և առօրյա կենցաղային ու մշակութային անասան հարցերի նվիրված գրություններ, թղթեր, նամակներ, պատմական ողբեր, ներբողներ, ընդօրինակել ու հաճախ մանրանկարազարդել է ձեռագրեր, շարադրել նրանց

հիշատակարանները, որոնց մեջ պատմագրական, գեղարվեստական և ձեռագրագիտական հսկայական նյութ է ամբարված¹:

Հայ միջնադարյան գրավոր ժառանգության մեջ բավական մեծ թիվ են կապմում եկեղեցական-ծիսական կիրառությունն ունեցող ժողովածուները, որոնք ստեղծվելով պատմա-հասարակական որոշակի պայմաններում, նշանակալի դեր են կատարել ժողովրդի հոգևոր-բարոյական կյանքը կապմաներպելու և իմացական կարողությունները պարզացնելու գործում: Ժամանակի ընթացքում դրանք խմբագրվել, հարստացվել և փոփոխությունների են ենթարկվել՝ նոր իրադրության ու պահանջների համապատասխան, իրենց մեջ առնելով նորանոր և բազմաբնույթ նյութեր: Այդ ժողովածուներից են Տոնականը, Հայսմավուրքը, Գանձարանը, որոնց մի մասը հայտնի է հենց խաթեցու անունով՝ «Ծերենցի Տոնական», «Ծերենցի Յայսմաւուրք», «Ծերենցի Գանձարան»:

Տոնական ժողովածուի կարգավորումը վերագրվում է Գեղարքունիքի Մաքենացոց ուխտի առաջնորդ Սողոմոն Մաքենացուն, որը գործը կատարել է 747 թվականին: Այդ մասին հիշատակություն է պահպանվել Մշո ձառնետիրի մեջ²: Տոնական ժողովածուն պարունակում է վարքեր, վկայաբանություններ, պատմություններ, ճառեր և այլն, որնք կարգացվել են համապատասխան տոներին: Մինչև Հայսմավուրքի գործածությունը, հայերի մեջ նրա դերը կատարել է Տոնականը: 10—11-րդ դարերում սակայն Տոնականում նվազում են վարքերն ու վկայաբանությունները և ավելանում առավելապես հանդիսավոր, հռետորական խոսքի ստեղծագործություններ՝ ճառ, ներբող, դրվատ, տեսիլք, պատմություն և այլն, որոնք կիրակի օրերին և տոնից-տոն արտասանվել և ընթերցվել են եկեղեցում, իսկ վարքերն ու վկայաբանությունները հավաքվում են Հարանց վարք և Հայսմավուրք ժողովածուներում: Տոնականը դադարելով եկեղեցու ծիսակատարությունների ամենօրյա օգտագործման ժողովածու լինելուց և միայն տոնից տոն կիրառվելով, ընթերցանության համար անհրաժեշտ բազմապես նյութերով հարստանալու հնարավորու-

թյուն է ստանում և վերածվում է Տոնական-ձառնետիրի, այսինքն երկակի դեր է կատարում³: Այս երևույթի առավել խորացումը տեսնում ենք Գրիգոր խաթեցու խմբագրած Տոնականներում, որոնց մեջ մուծված են ոչ միայն մեծ հատվածներ հայոց պատմագրքերից, այլև գեղարվեստական գրականությունից՝ պատմություններ, ներբողներ, դրվատներ, տեսիլներ, խրատներ, ապանակ մեկնություններ, տոների պատճառներ՝ այսինքն տոների ստեղծման շարժառիթների բացատրություններ, հարցմունքներ և այլն: Համաքրիստոնեական եկեղեցական և աշխարհիկ հեղինակների երկերի կողքին ավելի հաճախ հանդիպում ենք Ագաթանգեղոսի, Եղիշեի, Ղալար Փարպեցու, Հովհան Մանուչակունու, Չաքարիա կաթողիկոսի, Անանիա Նարեկացու, Հովհաննես Կոչեռնի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Այվազցու, Վարդան Այգեկցու, Գրիգոր Անվարպեցու, Հովհաննես Արճիշեցու, Գրիգոր վարդապետի և վերջապես իր իսկ՝ Գրիգոր Ծերենց խաթեցու գործերին, ինչպես և տարբեր անհայտ հեղինակների պատմությունների, վարքերի ու վկայաբանությունների:

Շրջանառության մեջ դրված այս բազմաբնույթ նյութերում հաճախ հանդիպում ենք պատմագրական, մատենագրական, մատենագիտական եպակի նմուշների, տեղեկությունների, կամ ընտիր հատվածների:

Գրիգոր խաթեցու ինքնագիր առաջին Տոնականը 14-րդ դարից է՝: Չեռագիրը թերի է սկզբից, միջից և վերջից: Պահպանված 258 թերթերում պարունակում է 85 միավոր, ըսկըսվելով ՂԵ (թերի) ճառից (սկզբում ՂԴ միավոր պակասում է), ավարտվում է ձԶԵ (185) ճառով: Միջից պակասում է վեց ճառ, իսկ վերջից՝ եթե ընդունենք, որ այն ունեցել է խաթեցու մյուս Տոնականի ծավալը (236

¹ Ս. Մարաբյան, Գրիգոր խաթեցու պատմագրական երկերը, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 2, Նույնի, Գրիգոր խաթեցու նամակները, ՀՍՍՀ ԳԱ Լրագրեր, 1978, № 5:

² Գ. Հրվեժյան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 722—723, Ա. Մաթևոսյան, Ելք և որտեղ է գրվել Մշո Տոնական-ձառնետիրը, «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 141: Հմմտ. Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 3ա:

³ Փ. Անթաբյան, «Տոնապատճառ» ժողովածուն, «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 105:

⁴ Մատենադարան, ձեռ. № 4803, Տոնական, գրիչ Գրիգոր որդի Ծերի՝: Խոյանդի, գրել է պարոն Հընդուի և նրա կուլակից Խութու խաթուկի համար: Այս ձեռագրի գրչությունը տարբերվում է խաթեցու մեկ հայտնի բոլոր ձեռագրերի գրչությունից: Եթե ծնողների անունը պահպանված չլիներ, դժվար թե տույն ձեռագիրը խաթեցուն վերագրվեր: Մեր կարծիքով սա Գրիգոր խաթեցու առաջին ձեռագրերից է: Դրա ապացույցն է նաև այն, որ Գրիգորը այստեղ միայն «գրիչ է», «գծողակ», «գրողակ», «միցնամատ գրող» (ինչպես իրեն կոչում է հիշատակարանում), և ոչ «պասաւոր» կամ «խնդրող բանի», վարդապետ կամ րաբունի: Ուրեմն խաթեցին ձեռագիրը գրել է մինչև վարդապետ ձեռնադրվելը, կամ համալսարան ավարտելը:

ճառ), պակասում է 51 միավոր: Պահպանված 85 միավորից 16-ը վարք և վկայաբանություն են, նույնքան պատմություններ, հիմուն ճառ և մեկական ներբող, տեսիլ, խրատ, դրվատ, գովեստ: Եղիշեից այստեղ երկու ճառ: կա, իսկ Վարդանանց պատերազմի մասին երկու հատված՝ «Վկայաբանություն սրբոց Վարդանանցն, որք կատարեցան ի Մեծ սատերազմին» և «Ղևոնդեանց քահանայիցն հայոց»⁵ խորագրերով, որոնք, ինչպես նկատել է Ե. Տեր-Մինասյանը, Եղիշեի պատմությունից չեն: Նա գրում է. «Ուշադրության արժանի է օրերի դասավորությունը⁶, բերված տեքստն էլ Եղիշեինը չէ, այլ մի շատ համառոտ վերապատում է»⁷: Ղապար Փարպեցու «Հայոց պատմությունից» քաղված են «Պատմութիւն սրբոյն Սահակա Պարթևի Հայոց հայրապետի Ղապարու պատմագրէ համառոտ», «Տեսիլ սրբոյն Սահակա հայրապետի» և անմիջապես սրանց հարող «Մեկնութիւն Տեսլան սրբոյն Սահակա» հատվածը⁸: Փարպեցու «Պատմութեան» սույն հատվածները հրատարակող Պ. Մուրադյանը գրում է, որ «Ծերենցի ընդօրինակությունը կատարված է, ամենայն հավանականությամբ, բավական հին երկաթագիր գաղափարից... հատվածի հիմնական արժեքը Փարպեցու տպագիր տեքստի համեմատությամբ ունեցած այլընթացումների մեջ է... ձեռագիրը բավական շատ տարընթերցումներ է տալիս այս ոչ մեծ հատվածում»⁹:

Շատ արժեքավոր է «Վկայաբանութիւն սրբոյն Վահանայ որդոյ Նուսրովու տեսուն Գողթան» պատմության հիշատակարանը, որը պարզում է հեղինակի ով լինելու հարցը: Նյութերն ավելի բազմազան են Գրիգոր Խլաթեցու կալված հաջորդ՝ հայ մատենագրության նշանավոր Տոնականներից մեկը համարվող ձեռագրում, գրված 1403—1406 թթ. Ռշտունյաց Նկարեն վանքում¹⁰:

⁵ Սույն տեղում, էջ 87ա—88բ, 90բ—92ա:
⁶ Նկատի ունի այն, որ Վարդանանց օրը երեք շաբթի է նշանակված, իսկ Ղևոնդյանցը՝ հինգշաբթի:
⁷ Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի յոս անեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957, էջ LVI:
⁸ Մատենադարան, ձեռ. № 4803, էջ 78ա—85ա:
⁹ Պ. Մուրադյան, Հատված Ղապար Փարպեցու «Պատմությունից», «Հայագիտական հետազոտություններ», պր. Ա, Երևան, 1974, էջ 199:
¹⁰ Մատենադարան, ձեռ. № 1520, 1521: Ձեռագրի ստացողներն են Նկարեն վանքի առաջնորդ Հովհաննես և Թոմա եղբայրները: Իր չափերով ձեռագիրը բավական մեծ է եղել (ինչպես ցույց են տալիս կտրված լուսանկարները): Այն ՀԵ (75)

Ձեռագիրը հետագայում մեծությամբ պատճառով երկու մասի է բաժանվել, որոնք այժմ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, կրելով 1520 և 1521 թվահամարները¹¹: Տոնականը բավական շատ նյութեր է պարունակում հայ պատմագիրներից: Ձեռագրի սկզբից պակասում է 42 թերթ: Պահպանված հաջորդ 18 թերթերում Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարսնի» երկի 148—268 էջերի պարունակությունն է, շարադրված հինգ և կես վկայություններով: Թվում է, սրանից առաջ շարադրված է եղել նույն պատմության մնացած մասը (սկզբից մինչև 148 էջը), այսինքն Տարսնի պատմությունն ամբողջությամբ ներկայացված է ելլել Խլաթեցու Տոնականում¹²:

Սրանից հետո հաջորդ երկու վկայությունները նույնպես պատմագրքերից են՝ արաբական տիրապետության ժամանակաշրջանի մասին: Վարդանանք, Ղևոնդյանք վկայությունները, ի տարբերություն նախորդ Տոնականի, վերցված են Եղիշեի պատմությունից: Այդտեղ է նաև Եղիշեի «Տիկնայք փափկատունք» հատվածը, որին առաջին անգամ ենք հանդիպում Տոնականներում: Մեծ հատվածներ կան նաև բազմաթիվ այլ պատմիչներից¹³: Տոնականում տեղ են գտել նաև Գրիգոր Խլաթեցու ստեղծագործությունները: Դրանցից «Գովեստ յամենասուրբ կոյսն Մարիամ» վերնագրված գործը վերջում ունի «Գրիգորի է» ծայրակապը¹⁴: «Համառուտ Պատմութիւն սրբոյն Ներսէսի հայրապետին մեծին և հրաշագործին» հատվածի վերջում Խլաթեցին գրել է. «Ի գծողէս բան վասն

պրակ, կամ 75×12=900 հաստ թերթ է ունեցել, որի պատճառով էլ հետագայում կիսվել է երկու մասի: Այժմ ձեռագրից պակասում է 45 թերթ: Տե՛ս, Ա. Մաթևոսյան, Ձեռագրական մանր սրբագրություններ, «Էջմիածին», 1968, է, էջ 60—64:

¹¹ Ձեռագիրը երկու մասի բաժանված վիճակով է նկարագրվել Դ. Շահնապարյանի և հրատարակվել Հ. Կարենյանի կողմից 1863 թվականին: Տե՛ս, Մայր Յուզակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, Թիֆլիս, 1863, № 915, 914:

¹² Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարսնի, Երևան, 1941, էջ 148—268, Մատենադարան, ձեռ. № 1521, էջ 1ա—18ա:

¹³ Տոնականում մեծ կամ փոքր հատվածներով ներկայացված են Ղապար Փարպեցու, Հովհան Մանդակունու, Չաքարիա կաթողիկոսի, Անանիա Նարեկացու, Միքայել Ասորու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Սկևռացու, Պողոս Տարսնացու, Վարդան Այգեկցու, Գրիգոր Անավարպեցու, Հովհաննես Երզնկացու, Հովհաննես Արձիշեցու ստեղծագործությունները:

¹⁴ Մատենադարան, ձեռ. № 1521, էջ 420—423:

տեառն Ներսիսի» խորագրով չափածո պատմությունը¹⁵:

Տոնականի 293ա—315ա էջերում Գրիգոր Խլաթեցին «Բանք պանծալիք ի վարուց ճգնաւորաց» (28), «Այլ բանք պիտանիք, շահաւետք և աւգտակարք ի վարուց սրբոց հարանցն ճգնաւորաց» (45), «Ի վարուց սուրբ հարանցն բանք պիտանիք» (47), «Բանք պիտանիք ի վարուց սուրբ հարցն» (46), «Բանք պիտանիք ի հարանց վարուց» (54), «Բանք պիտանիք և աւգտակարք» (31), «Պատմութիւն ի հարանց վարուցն պիտանի» (14) խորագրերի տակ բերում է երկու հարյուր յոթանասունհինգ պատմություն, բաղվածք, խրատ, առակ, ասույթ և այլ օգտակար նյութեր կրոնա-բարոյական, կենցաղային, հայրենասիրական թեմաներով, մարդկային առաքինությունները դրվատող և մոլությունները պարսավող մանրապատումներ, որոնք Տոնականը դարձնում են ոչ միայն ճառընտիր, այսինքն ընտիր ճառերի ժողովածու, այլև ընթերցանության համար խրատարան, ուր հաճախ հարցով դիմում են ծերին և նա պատասխանում է: Ահա մի քանի նըմուշ. «Հարցաւ ծեր ոմն, թէ բարուք է ընթերցումն գրոց: Եւ նա ասէ. բարուք է առ ի դաւաճանումն չարին»¹⁶: «Հարցաւ ծեր, թէ որպէս ոմանք դիւրաւ գործեն զգործս Աստուծոյ, և ոմանք ոչ կարեն: Եւ նա ասաց. Որք հարկաւոր համարին զգործսն Աստուծոյ և յաշխարհականն աւելորդ՝ դիւրաւ գործեն, եւ որք զերկրաւորս համարին հարկաւոր՝ յըծարաւ գործեն պատուածոյսն»¹⁷:

«Հարցաւ ծեր-թէ ո՞ր լաւ է, խաւսե՞լն, թէ լոնն: Ասէ. երկոքինն՝ չափով: Բայց ի չարէն բնաւ լոնէ, եւ զբարին սակաւ խաւսէ:» «Ասաց ոմն. Լաւ է ժիր լինել և սնափառ, քան ծոյլ և խոնարի»¹⁸ և այլն:

Երրորդ ինքնագիր Տոնականը Խլաթեցին կոչում է «Տունականաձագ»¹⁹: Հիրավի սա

¹⁵ Սույն տեղում, էջ 404ա—407բ:

¹⁶ Սույն տեղում, էջ 299ա:

¹⁷ Սույն տեղում, էջ 306բ:

¹⁸ Մատենադարան, ձեռ. № 1521, էջ 307ա:

¹⁹ Մատենադարան, ձեռ. № 4774: Ձեռագրի ստաղդներն են Հովհաննես արեղա և Հովհաննես փիլիսոփա եղբայրները: Հիշատակարանում, որպէս սըրանց մտերիմ և աջակերտ, հիշվում է նաև Առաքելը՝ Ռշտունյաց Նկարեն վանքի առաջնորդը: Սույն ձեռագիրը թյուրքիմացաբար ԺԶ դարի ընդօրինակություն է համարվել (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի

նախորդի հետ համեմատելիս համոզվում ենք, որ այն «ձագ» է ոչ միայն արտաքին չափերով, այլև նյութի տարողությամբ: Չուստ զրան, Խլաթեցին չի մոռանում ժողովածուն համեմել տարբեր տեղերից բաղված խրատական, ուսուցողական, բարոյագիտական ու կենցաղային առակներով ու ասույթներով: Ահա դրանցից մի քանիսը. «Որդեակ, ընդ անգէտ մարդոյն ամենևին մի խաւսիր, զի մի ծաղր լինիցիս: Ընդ անխելին գինի մի խմեր, և սանմիտն տանուտեր մի դներ: Այր մեղաւոր խելաւք ջինէ կտուն, և այր անխել, թեպէտ արդար է, աւերէ կտուն, զի այր խելաւք թեպէտ և մեղաւոր է՝ զիւր արտն և զայլոց՝ խաղաղէ խելօքն և ծածկէ, և անգէտն՝ հրապարակէ զիւրն և զայլոցն:

Ընդ ժամանակին մի հակառակեր, այլ միաբանեաց ընդ ժամուն և ժամանակին:

Մարդ ոք, որ զինչ կամի ասէ՝ ընդ նմա մի խաւսիր և շատախաւսին ունկն մի դներ:

Արար Աստուած զգինի վասն ուրախութեան, բայց ի տեղիս տեղիս լաւ է լեղի ըմբել, քան զգինի, զի է ժամանակ, որ գինի վառաւորէ կորդիս մարդկան և երբեմն ծաղր և ամաւթալից կացուցանէ:

Յընծութիւն սրտի և ուրախութիւն լերդի է գինի, յործամ ըստ պատշաճին լիցի բաւական:

Մի խոստանար ընկերի քոյ, զոր ոչ կարես տալ, զի մի պսիրելութիւն յատելութիւն դարձուցանես»²⁰:

Այսպիսով տեսնում ենք, որ Գրիգոր Խլաթեցին սպատ է վարվել ժողովածուներ կազմելիս, դրանք ավելի հետաքրքիր և օգտակար դարձնելու մտահոգությամբ: Հիշյալ երեք Տոնականները իրարից արտագրված ձեռագրեր չեն, այլ ամեն մեկը ինքնուրույնաբար է ստեղծված: Երբեմն վկայությունների կամ ճառերի ու այլ միավորների տեղերը չեն փոխված, երբեմն բոլորովին այլ նյութեր են սուծված: Դրա շնորհիվ Գրիգոր Խլաթեցու Տոնականները հսկայական պատմական, վարքա-վկայաբանական, գեղարվեստական և այլ բնույթի արժեքավոր նյութեր են պարունակում:

անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 1283): Սակայն այն գրվել է մինչև 1425 թվականը (այսինքն Խլաթեցու մահը) և 1406 թվականից հետո (նախորդ մեծ Տոնականից հետո):

²⁰ Մատենադարան, ձեռ. № 4774, էջ 320բ: